# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ




## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/117-24

<< 04 >> հուլիսի 2024թ. ԼԻՑ 17384

*Պատվիրատու՝ ՀՀ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ*

*Նախագծող՝ <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Է. ԴԱՎԹՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ **երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 48 129.30 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 3 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
տնօրեն Ն. Միրեկյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը

Պատվիրատու՝ ՀՀ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Նախագծող՝ <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Է. ԴԱՎԹՅԱՆ

Նախագծային աշխատանքների կազմման համար հիմք է հանդիսացել պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքը:

Նախատեսվում է Սիսիան քաղաքի քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է կատարել հետևյալ հիմնական շինարարական աշխատանքները՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, շինարարական աղբի հավաքում, բարձում և տեղափոխում: Խճի նախապատրաստական շերտի իրականացում, հարթեցնող շերտի իրականացում ցեմենտավազե շաղախից ամրանացանցով, լամինատե հատակների իրականացում ներառյալ շրիշակները, պրեսգրանիտե հատակների իրականացում ներառյալ շրիշակները: Առաստաղների, պատերի և շեպերի գաջե սվաղի իրականացում, պատերի երեսապատում հախճասալով, պատերի և առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ածկապատմամբ: Պատուհանները իրականացվում են մետաղապլաստե պատուհաններով՝ բացվող և չբացվող մասերով, պլաստմասե պատուհանագոգերով: Պատուհանների մետաղական ճաղաշարի պատրաստում և տեղադրում, մետաղական մասերի երկտակ յուղաներկում: Ալյումինե երկշերտ ապակեպատ և փայտե խուլ արտաքին դռների տեղադրում, ՄԴՖ ներքին դռների տեղադրում, արտաքին պատուհանագոգերի իրականացում ցինկապատ թիթեղից: Միջնորմերի կառուցում թեթևաբետոնե բլոկներով ամրանավորված, միաձույլ երկաթբետոնե բարավորների իրականացում, կախովի առաստաղների իրականացում պլաստմասե վահաններով մետաղական հիմնակմախքով: Երկաթբետոնե

աստիճանների, թեքահարթակների և հենապատերի կառուցման աշխատանքների իրականացում, աստիճանների և թեքահարթակների երեսապատում բազալտե երեսապատման սալերով, մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում, մետաղական մասերի երկտակ յուղաներկում: Արտաքին հարդարման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցեր, սանիտարական սարքերի տեղադրում: Ջեռուցման համակարգի իրականացում, այումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում և ապամոնտաժված մարտկոցների վերատեղադրում, այումինե շերտով պոլիպրոպիլենային խողովակների անցկացում և փորձարկում, ներառյալ ձևավոր մասերը: Էլեկտրաուժային սարքավորումների և էլեկտրալուսավորության ցանցերի անցկացում, լուսատուների, անջատիչների և վարդակների տեղադրում: Հակահրդեհային, համակարգչային, հեռախոսային և անվտանգության ցանցերի անցկացում: Նախատեսվում է իրականացնել տարծքի բարեկարգման աշխատանքներ:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով:

Հաշվարկը կազմում է **48 129.30** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2358.7** և մեքենաների շահագործման ինդեքսը **3136.87**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N 04 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Ն. Սիրեկանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

## ՔՊԼ 17384

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «13 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.» «ԱՐԽԻՏԵԿՏ » ՍՊԸ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ, 83, 40 ԲՆ.

(Լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործունեության ժամկետը` ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ (ստորագրությունը) Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն, ազգանուն)